



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*30 դեկտեմբերի 2010 թվականի
թիվ 345-Ս, քաղաք Երևան*

**«ԷՅ ԴԻ ՄԻ ՀՈՒԴԻՆԳ ԷՅ ՄԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ-«ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՍ
ՔԱՄՓՆԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԱՆՁԱՆՑ ԽՄԲԻ ԵՎ «ՖԱՅԲՐՆԵՏ
ՔՈՍՅՈՒՆԻՔԵՅՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրնբաց նիստում, «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերություն) ներկայացուցիչների մասնակցությամբ, քննարկեց «Էյ Դի Մի Հոլդինգ Էյ Մի» ընկերություն-«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» փակ բաժնետիրական ընկերություն» անձանց խմբի (այսուհետ նաև՝ Անձանց խումբ) և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության համակենտրոնացման վերաբերյալ հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Անձանց խումբը և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերությունը Հանձնաժողով են ներկայացրել Անձանց խմբի և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության համակենտրոնացման հայտարարագիրը, հայտնելով, որ «Էյ Դի Մի Հոլդինգ Էյ Մի» ընկերությունը (Նորվեգիա) պլանավորում է ձեռք բերել «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության 100 տոկոս բաժնեմասը և գործարքի նպատակն է հանդիսանում ռեսուրսների համատեղ օգտագործմամբ շուկայում ավելի արդյունավետ մրցակցության ապահովումը:

Դիմումի հիման վրա, սահմանված կարգով, Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական վարույթ, որի ընթացքում պարզվել է, որ «Էյ Դի Մի Հոլդինգ Էյ Մի» ընկերությունը հանդիսանում է «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» փակ բաժնետիրական ընկերության միակ սեփականատերը, հետևաբար, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, «Էյ Դի Մի Հոլդինգ Էյ Մի» ընկերությունը և «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» փակ բաժնետիրական ընկերությունը համարվում են անձանց խումբ՝ մեկ տնտեսվարող սուբյեկտ: Ուստի, համակենտրոնացման մասնակիցներ են հանդիսանում «Էյ Դի Մի Հոլդինգ Էյ Մի» ընկերություն-«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» փակ բաժնետիրական ընկերություն» անձանց խումբը և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերությունը:

Հարուցված վարչական վարույթի շրջանակում Անձանց խմբի և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության կողմից Հանձնաժողով են ներկայացվել համապատասխան փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

Վարչական վարույթի իրականացման ընթացքում Հանձնաժողովի կողմից կազմակերպվել է քննարկում, որի արդյունքում 2010 թվականի դեկտեմբերի 29-ի գրությամբ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության կողմից տրամադրվել է համակենտրոնացման արդյունքում շուկայում հնարավոր հետևանքների վերաբերյալ եզրակացություն (այսուհետ՝ Եզրակացություն):

Քննարկելով Անձանց խմբի և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության համակենտրոնացման վերաբերյալ հարցը, Հանձնաժողովը գտնում է, որ նշված համակենտրոնացումը ենթակա է թույլատրման՝ հետևյալ հիմնավորմամբ:

Համաձայն Օրենքի 8-րդ հոդվածի «բ» կետի՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռքբերողին արդեն պատկանող ակտիվների կամ փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի 20 տոկոսը: Ըստ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը կամ դրան մասնակցելը, ենթակա է հայտարարագրման, եթե մասնակիցների ակտիվների համատեղ արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է առնվազն երեք միլիարդ դրամ:

Հարկ է նշել, որ 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ Անձանց խմբի ակտիվները կազմել են 4639429 հազար դրամ, իսկ «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության ակտիվները՝ 734678 հազար դրամ:

Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա կամ գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումը թույլատրվում է Հանձնաժողովի որոշման հիման վրա:

Հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի «Տվյալների հաղորդման միջազգային տարանցման ծառայություն՝ ինտերնետ հասանելիության համար» ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրության արդյունքների մասին» թիվ 81-Ա որոշմամբ «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերությունը համարվել է գերիշխող դիրք ունեցող «Տվյալների հաղորդման միջազգային տարանցման ծառայություն՝ ինտերնետ հասանելիության համար» ապրանքային շուկայում: Հայաստանի Հանրապետությունում տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման նպատակով միջազգային հասանելիությունը այդ ժամանակահատվածում ապահովվում էր «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» և «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից: Սակայն ներկայումս՝ «ՋիԷնՍի-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերության մուտքով տվյալ ապրանքային շուկայում իրավիճակը փոխվել է: Հարկ է նշել, որ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ընկերություն) «Տվյալների հաղորդման միջազգային տարանցման ծառայություն՝ ինտերնետ հասանելիության համար» ապրանքային շուկայում գործունեություն չի իրականացնում: Հետևաբար, հարկ է ամրագրել, որ համակենտրոնացման արդյունքում նշված շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների դիրքերը չեն փոփոխվում և համակենտրոնացումը չի հանգեցնում գերիշխող դիրքի, ինչը հաստատվում է նաև Եզրակացությամբ: Այսպես, «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ընկերությունը մատուցում է լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություն Հայաստանի Հանրապետության տարածքում: Այս շուկայում գործում են բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից առաջատարների թվում են «ԱրմենՏել», «Ղ-տելեկոմ», «Օրանժ-Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունները, «Յուքոմ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և այլն: Համաձայն Եզրակացության՝ նշված տնտեսվարող սուբյեկտներից առաջին երեքը զբաղեցնում են շուկայի մոտ 80 տոկոսը: Ըստ «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության կողմից ներկայացրած տեղեկատվության՝ շուկայում նրա կողմից մատուցվող ծառայությունների ծավալը կազմում է «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության ընդհանուր իրացման ծավալի ընդամենը 3 տոկոսը: Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ այս շուկայում ևս համակենտրոնացումը չի հանգեցնում գերիշխող դիրքի:

Բացի նշված ծառայություններից, «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ընկերությունը և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերությունը մատուցում են նաև տվյալների փոխանցման (հաղորդման) ծառայություն: Համաձայն Եզրակացության՝ նման ծառայություն մատուցվում է նաև այլ տնտեսվարող սուբյեկտների, մասնավորապես, «Արմինկո» և «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, «ՋիԷնՄի-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերության և այլ տնտեսվարող սուբյեկտների, կողմից, ընդ որում այդ ծառայությունը տարանջատելը և առանձին դիտարկելն աննպատակահարմար է, քանի որ նմանատիպ ծառայություն հնարավոր է ստանալ նաև այլ եղանակով: Եզրակացությամբ նշվել է նաև, որ որպես դրական գործոն կարելի է համարել, որ նշված գործարքը կարող է հանգեցնել շուկայում խոշոր դիրք չբաղեցնող ընկերությունների (օպերատորների) հետ մրցակցող նոր ընկերության կազմավորմանը:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով, որ Անձանց խմբի և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության համակենտրոնացումը ենթակա է հայտարարագրման և չի հանգեցնում գերիշխող դիրքի, հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-10-րդ հոդվածները և 19-րդ հոդվածի առաջին մասի «ա» և «թ» կետերը, Հանձնաժողովը՝

ո ր ո շ ու մ է

1. Թույլատրել «Էյ Դի Մի Հոլդինգ Էյ Մի» ընկերություն-«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» փակ բաժնետիրական ընկերություն» անձանց խմբի և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համակենտրոնացումը՝ Անձանց խմբի կողմից «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ընկերության 100% բաժնեմասի ձեռքբերման միջոցով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Էյ Դի Մի Հոլդինգ Էյ Մի» ընկերությանը, «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» փակ բաժնետիրական ընկերությանը և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ